# Կոմիտասը մեր ժողովրդի հպարտությունն է

## ԼՐԱՑԱՎ ԾՆՆԴՅԱՆ 145-ԱՄՅԱԿԸ

*... Դու Ամենայն Հայոց Երգի Վեհափառն ես,*
*Դու՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց,*
*Գիրն ու տառն ես Հայոց Երգի*

*Պարույր ՍԵՎԱԿ*



Կոմիտասը (Սողոմոն Գևորգի Սողոմոնյան) հայ ազգային դասական երաժշտության հիմնադիրն է: Դժվար է թեկուզ մի պահ հայ երաժշտական մշակույթը պատկերացնել առանց Կոմիտասի, առանց նրա հոգեպարար ու գողտրիկ երգարվեստի: Կոմիտասը իր բազմաբեղուն գործունեությամբ դարագլուխ կազմող մեծություն է: Նրա հանդես գալը բացառիկ նշանակություն ունեցավ ժողովրդական ստեղծագործության թանկագին արժեքների վերհանման ու գնահատման գործում:

Բազմադարյան հայ երաժշտության պատմության մեջ ժողովրդի բնորոշ ոգին ու բնավորությունը, նրա վիշտն ու ուրախությունը, իր գոյության համար մղած մահու և կենաց պայքարը, նրա ապրած ողբերգությունը ամենից ավելի իրենց բազմակողմանի և խոր արտացոլումը գտան հանճարեղ Կոմիտասի ռեալիստական ստեղծագործությունների մեջ: Դրանք իրենց թեմատիկ ու ժանրային բազմազանությամբ ու բազմերանգությամբ հանդիսացան Կոմիտասի ստեղծագործության հորդառատ աղբյուրը, նրա գիտահետազոտական մտքի անկյունաքարը:

Հայ երաժշտական մշակույթի անցյալի, ներկայի և ապագայի բազում հոգսերով այրվող Կոմիտասն իր գործունեությամբ և նորարարական անօրինակ խիզախումներով նշանավորեց հայ երաժշտության զարգացման, կազմավորման շրջանը՝ դառնալով հայոց երգի Մեսրոպ Մաշտոցը:

Կոմիտասը որպես խոշոր ստեղծագործող ու գիտնական, 19-րդ դարի 90-ական թվականներից պայքարի ելավ հայ երաժշտության ինքնության ու ինքնատիպության համար: Աշխարհով մեկ նա ապացուցեց, որ հինավուրց ու բարձր մշակույթի հասած իր ժողովուրդը մյուս քաղաքակիրթ ժողովուրդների նման ունի իր ազգային լիարժեք երաժշտությունը:

Բացառիկ մեծ է Կոմիտասի դերը: Նա ոչ միայն ականավոր կոմպոզիտոր էր, գիտնական, մանկավարժ, երգիչ, նվագարար-խմբավար ու արտիստ, այլև բանաստեղծ ու երաժշտա-հասարակական գործիչ, հրապարակախոս ու հայրենասեր քաղաքացի: Հանճարեղ երգաստեղծը հեղինակ է նաև մի քանի տասնյակ բանաստեղծությունների: Դրանք նրա կենդանության օրոք չեն տպագրվել. պարզապես հեղինակն իրեն չի համարել կոչումնավոր բանաստեղծ և գրել է ինքն իր համար: Երբեմն միայն՝ ամենամտերիմներից մեկի ալբոմում թողել է որևէ չափածո հիշատակ: Կոմիտասի բանաստեղծությունները գրական կուռ մտածողության, գեղագիտական ուրույն ըմբռնումների արդյունք են: Նրանք ցույց են տալիս հանճարեղ երաժշտի, իբրև արվեստագետի, հետաքրքրասիրությունների բազմազանությունը, մտքի բարձր թռիչքը, մայրենի մշակույթը խորապես տիրապետելը և գրական նրբագույն ճաշակը: Նրա պոեզիան ավելի քան հասկանալի է դարձնում մեղեդիների բյուրեղյա ոճը, երգերի խոսքերի մեծարվեստ մշակվածությունը, մտքի, հույզի անսահման խորությունն ու ձևերի ավարտուն հղկվածությունը: Երաժշտականի նման, Կոմիտասի գրական մտածողությունը ևս դասական է:

Կոմիտասը հայտնաբերեց հայ ժողովրդական երգը, մեծ երաժշտագետի տաղանդով մշակեց այն, դեն շպրտեց օտար խառնուրդը, դարձրեց բյուրեղի պես մաքուր, աղբյուրի պես վուլալ և կրկին վերադարձրեց այն ժողովրդին, որը ծնել էր այդ երգը:

Այդ երգը բազմադարյան հայ ժողովրդի ավնվագույն երազանքի, ոգու բռնկումների արտահայտությունն էր, նրա ապրումների խտացումը:

Այդ երգը բացահայտեց հայ ոգու կախարդանքն ու իմաստությունը, դարձավ ինքնաճանաչման հկոր վենք, մեր ժողովրդին մղեց ազգային և համամարդկային պայծառ երազանքների:

Այդ երգը մեծ դեր խաղաց հայ ժողովրդի ազգային զարթոնքի և վերածննդի գործում:

Այդ երգի հետ զորացավ ու մեկ համար սրբություն դարձավ նաև մեծ Կոմիտասը, որ ապրեց ընդամենը 66 տարի:

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ ՄԵԾՆ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

Կոմիտիասը մեր ժողովրդի հպարտությունն է. նրա գործը՝ մեր ազգային անսպառ հարստությունը:

Նա հայտնագործել է մեր ազգային երգը, հայկական երաժշտությունը, ազգային մելոսը՝ ինքնուրույն, ինքնատիպ և անաղարտ: Նա հիմն է դրել ազգային երաժշտական կուլտուրայի:

* * *

Ուր որ հայ կա, այնտեղ է և Կոմիտասի երգը: Կոմիտասը համազգային մեծություն է: Նրա երգով մեր ժողովուրդը ավելի գիտակցաբար զգաց իրեն, ավելի կապվեց իրար հետ, ինքնաճանաչեց: Հայ հասարակությունը զգաց աշխատավոր ժողովրդի վիշտն ու հրճվանքը, նրա աշխատանքային խանդը, նրա սերը դեպի իր հայրենի բնությունը:

Կոմիտասը հայ երգով լույս աշխարհ հանեց դարերի խավարի մեջ կեղեքված ժողովրդի խուլ բողոքն ու ցասումը բռնության, ստրկության դեմ, նրա խեղդված վիշտը, իրավապուրկ կյանքը և պայծառ ապագայի հանդեպ տածած հավատը:

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

* * *

Կոմիտասը վեմն է հայ երաժշտության, հիմնաքարը: Կոմիտասը այն իմաստուն ստեղծագործողն է, որ մեծապես հասկացավ ժողովրդական աղբյուրների կենսալից ուժը և իր նյութը վերցրեց այնտեղից:

Դերենիկ ԴԵՄԻՐՃՅԱՆ

* * *

Երեք տարի Կոմիտասին հետ օրուգիշեր նույն երդիկին տակ ապրելով, մոտեն ճանչցա անոր նկարագրի գծերը...

Կոմիտասը մարդկային բացառիկ առաքինություններու ծով էր: Չափազանց աշխատասեր, աննկուն կամքի տեր, անկեղծ, բարեհոգի, ընկերասեր, քաղցր և համեստ՝ ամենուն նկատմամբ: Մաքրակրոն էր ան և մեծ հայրենասեր մը: Բացի իր երաժշտական հանճարեն, քովնտի շնորհքներ ալ ուներ. բանաստեղծ էր... վերին աստիճանի սրամիտ, կենսուրախ և պատրաստաբան էր Կոմիտաս և սիրված ճեմարանի մեծեն ու փոքրեն:

Իմացել եմ, որ 1906 թվին Փարիզի մեջ Կոմիտասի ցուցադրական մեկ համերգեն վերջ, ֆրանսիացի հայտնի կոմպոզիտոր-դաշնակահար Կլոդ Դեբյուսը ծունկի գալով կհամբուրե Կոմիտասի ձեռքերը, ըսելով՝ "Հանճարեղ հայր Կոմիտաս, Ձեր երաժշտական հանճարին առջև կխոնարհիմ":

Հրաչյա ԱՃԱՌՅԱՆ

* * *

Այս ամենը, որ գրում եմ, կարծես երազ է: Եվ ինքը Կոմիտասն էլ երազի պես անցավ, նա էլ կարծես մի երազ էր, մի հեքիաթ, որ եղել է և չի եղել, որ կա և չկա: Բայց ամեն անգամ, որ նրա ձայնագրած ու դաշնակած ժողովրդական երգերը լսում եմ, այդ անցյալն իրականություն է դառնում ինձ համար, կենդանանում է իմ աչքի առաջ նա իր ոգևորությամբ մեր ժողովրդական երգերի համար, որ զգում եմ և գիտեմ, որ նրա կատարած գործը վաղանցիկ չի լինի և երկար, շատ երկար ժամանակ նա մեր բնիկ երաժշտական հնչյուններով սիրելի կդառնա շատ սերունդների:

Մանուկ ԱԲԵՂՅԱՆ

* * *

Կոմիտասի առաջին և կարևորագույն գործը՝ հայ երաժշտական ոճը գտած ըլլալն է:

Կոմիտաս վարդապետ եղավ առաջին հարազատ հայագույն դաշնակողը հայ երգին, և ատիկա իր կատարած գործին երկրորդ կարևոր կեսն է:

Կոմիտաս վարդապետ հայ երաժշտական ֆոլկլորի, նույնիսկ արևելյան ֆոլկլորի, բանասեր-հավաքիչ մըն ալ եղած է, բացի նոր հայ երաժշտության մը ռահվիրայի իր դերեն:

Կոմիտաս արտակարգ երգիչ էր, հայ երգին մեր օրով մեծագույն արտահայտիչը:

Կոմիտաս եղավ հայ երաժշտության մեջ պրոպագանդիստը, առաքյալը օտարներուն մոտ և հայոց իսկ համար:

Կոհտաս եղած է խանդավառ ուսուցիչ մը և արտակարգ խումբ կազմող ու վարող մը:

Կոմիտասի ճոխ անձնավորության մեջ ամենակարևոր տեղերեն մին կբռնե գիտուն ուսումնասիրողը:

Կոմիտաս, վերջապես, ստեղծագործ երաժիշտ էր և ոչ միմիայն հավաքող ու դաշնակող, ինչպես ոմանք կկատարեն:

Արշակ ՉՈՊԱՆՅԱՆ

* * *

Հայ ժողովրդական երգերը ավելորդ պաճուճանքի կարոտ չեն... նրանց մեղեդիական պարզ ու վճիտ, անկեղծ ու հանդուգն երանգները բխում են հայ գյուղացու հոգու խորքերից... Այդ երգերի միակ մեծ վարպետը եղել է և մնում է հանճարեղ Կոմիտասը... Այդ հանճարի հզոր ու սրտագին ձայնի մեջ հայ գեղջուկ երգը դրսևորեց հոգեկան այնքան նրբերանգներ, որ հայ երաժշտությունը հասավ մեծ ճարտարապետության, մանրանկարչության, պարդաքանդակների ու էպոսի նախանձելի բարձրության...

Եղիշե ՉԱՐԵՆՑ

* * *

Երգի համաշխարհային տիտան էր Կոմիտասը, բազմակողմանի երաժիշտ ու գիտնական, այն բացառիկ դեմքերից, որոնք էական դեր են կատարում իրենց ժողովրդի հոգևոր կյանքում: Խոսքերով չի կարելի գնահատել այն, ինչ նա արեց հայ ժողովրդի համար...

Նրա կյանքը ողբերգական եղավ, բայց հակառակ դրան՝ նա հասցրեց անել գործեր, ստեղծել երգեր, որոնք ոչ թե պարզապես կարևոր նշանակություն ունեցան, այլ եղան ամուր հիմնաքար: Այսօր մենք առիթ ունեցանք լսելու նրա խմբերգերը, որոնք ցնցեցին մեզ: Դրանք այնպիսի գոհարներ են, վարպետության այնպիսի փայլով գրված, ունեն այնպիսի ազգային բուրմունք և մարդկային խորություն, որ կարող են ավետարան լինել ոչ միայն հայ, այլև բոլոր ազգերի երաժիշտների ու երաժշտասերների համար:

Տիխոն ԽՐԵՆՆԻԿՈՎ

* * *

Ոչ ոք ինձ չի կարող մեղադրել չափազանցության մեջ, եթե ես ասեմ, որ այդ համերգը (1906թ. Փարիզ) մի հեղաշրջում էր և իր հայտնությամբ պարմացրեց մեզ: Ներկա եղողներից ոչ ոք, ի բացառյալ նուրբ գիտակներից, իրեն պատկերացնել չի կարող այդ արվեստի գեղեցկությունը, որն ըստ էության ոչ եվրոպական է, ոչ արևելյան, բայց եզակի է իր տեսակի մեջ: Սքանչելի քաղցրահնչյուն, խորապես հույական, չափավոր քնքուշ այդ մեղեդիները նրբակերտ են ու ավարտված: Ճկուն ու կենդանի ռիթմերի առատությամբ հարուստ երաժշտություն է դա՝ կարծեք հենց սրտի խորքից հոսելիս լինի, որպես սառնորակ, վճիտ, արևաշող հոսանք...

Լուի ԼԱԼՈՒԱ,
ֆրանսիացի երաժշտագետ